

ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

(Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական
համալսարան)

«ԽԱՎԱՐ»-Ի ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿԵԼԻՆԵՐԸ ՊՈԼԻՆԵԶԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐԸ

(նախնական տարբերակ)

Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների շատ կարևոր մաս են կազմում նաև գունանունները: Պոլինեզիական գունանուններն ունեն որոշակի առանձնահատկություններ, օրինակ՝ դրանց մեջ բազմաթիվ են նեղ մասնագիտացված եզրերը, որոնք կարող են գործածվել միայն առարկաների որոշակի մասի կամ նույնիսկ որևէ կոնկրետ առարկայի համար: Պոլինեզիական գունանուններից շատերը պայմանավորված են բնության տարբեր երևույթների, բույսերի կամ կենդանիների ու մարդկանց գույներով: Բացառություն են կազմում միայն *լույսի* և *խավարի* հակադրության նշանակումները:¹ Սրանցից «խավար»-ին և դրան հարակից հասկացությունների հայերեն գուգահեռներին էլ կանդրադառնանք ստորև:

Կարծում ենք՝ ճիշտ կլինի սկսել դրանցից ամենակարճ և ամենաբազմիմաստ տարբերակից, այն է՝ ռապանուերեն **po** «երեկո, գիշեր, մութ, խավար» բառից: Պոլինեզերեն **po** «երեկո, գիշեր, մութ, խավար» բառի բնիկ հայերեն գուգահեռը **բալ** «մեզ, մռայլ, մթին, մթազոյն, մառախուղ, աղոտ, ամպ, ծխի քուլա» բառն է: Այն բխեցվում է բնիկ հնդեվրոպական *bhel- «փայլուն, սպիտակ» արմատից և համեմատվում հ. հնդկ. bhāla «փայլ», հուն. φοῶς «փայլուն, շողշողուն, սպիտակ», հայ. բիլ «բաց կապույտ», գոթ. bala «դժգույն», հւլ. bēl «սպիտակ», ռուս. белый «սպիտակ», белмо «աչքի փառ», լիթ. baltas «սպիտակ», baln «ճերմակիլ, սպիտակիլ», լեթթ. bāls «դժգույն», bals «դժգունություն», balināt «դժգունել», հւաքս. blī «զոյն», հիիւս. bál, անգլւք. baēl «բոց, կրակ, փայտակոյտ», միդլ. ball «բիծ», կիմր. bal «ճակատի վրայ սպիտակ բիծ ունեցող (անասուն)» և այլ բառերի հետ:²

Ինչպես տեսնում ենք՝ բնիկ հայերեն **բալ** բառի հնդեվրոպական գուգահեռները հնչյունական պլանով նույնական են, բայց իմաստային պլանով՝ ոչ, նույնիսկ կարելի է ասել՝ հակառակ իմաստն ունեն: Հ. Աճառյանը, հղում կատարելով Պոկոռնուն, գրում է. «մեր մեջ մթութեան գաղափարը աւելի խտացած և «փայլ» իմաստը բոլորովին ջնջուած է»³:

«Խավար» իմաստը պոլինեզիական լեզուներում արտահայտվում է հետևյալ բառերով. **ava** «մութ, մթություն», ռապ. **ao** «մթնել», մարկիզ. **ao**, հավայ. **ao**, մանգ. **ao**: Պոլինեզիական **ava** «մութ, մթություն» բառի պարզ արմատն է **av**: Քանի որ գրաբարյան ուղղագրությամբ **ao** բառը պիտի գրեինք **աաւ**, ուրեմն **ao** տարբերակի պարզ արմատը կլինի **aav** կամ, որ նույնն է՝ **āv** (հիշեցնենք, որ ռապանուերենում երկար ձայնավորները կոչվում են նաև կրկնակի և գրության մեջ արտահայտվում են

¹ В. Крупа, Полинезийские языки, М., 1975, с. 128.

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, էջ 383, Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 112:

³ ՀԱԲ, հ. 1, էջ 383:

որպես կրկնակ ձայնավորներ. a-կարճ, aa –երկար կամ կրկնակի, e –կարճ, ee –երկար կամ կրկնակի, i- կարճ, ii –երկար կամ կրկնակի, u-կարճ, uu-երկար կամ կրկնակի):

Վերջիններիս բնիկ հայերեն զուգահեռներ ենք դիտում **ազ**-անիլ «գիշերը մի տեղ անց կացնել, օթեւանել» (բխեցվում է հնիւ. **aw-** «գիշերել, քնել» արմատից), **ազ**-անիմ (ազայ, ազիր, ագուցեալ) «գիշերը մի տեղ անց կացնել, օթեւանիլ», ագուցանել «հիւրընկալել», օթ-ազայիլ, օթ-ազան լինել, օթ-ազանիլ, բաց-օթեագ «դուրսը գիշերած», վայր-ազ «դուրսը կեցող» և գրաբարյան **աւթ** «գիշերում, մեկ օրվա ճանապարհ, երեկո, գիշեր» (բխեցվում է հ.-ե. *au-ti` *au «գիշերել, քնել»-ից),⁴ որից ունենք **աւթոց** «ծածկոց» բառերը:⁵

Մարկիզյան կղզիներում նույն արմատն աճել է նախաձայն h-ով, հնչում է **hava** և նշանակում է «*խավար*» (հմմտ. ռապ. hiva «արևմուտք»): Այս (ava>hava) զարգացման համար նշենք հետևյալը. մեր կարծիքով, հայերենի զարգացման վաղնջագույն փուլում տեղի է ունեցել բառասկզբում կոկորդային շնչի հավելում. ընկեր>**հ**ընգեր, րամայել>**հ**րամայել, նազանդ>**հ**նազանդ, րես>**հ**րես, րեդ>**հ**րեդ, րեն>**հ**րեն (Սուչավա), եղի «*հասնելու մոտ ցորեն*»>**հ**եղե/**հ**եղի «*նոր հասնող ցորեն*» (Ղրբ.) ելն: Եթե ճիշտ է մեր այն տեսակետը, որ պոլինեզիական լեզուներն ընդհանրապես և ռապանուիներնը մասնավորապես ներկայացնում են հայերենի խորագույն հնության վիճակը, ապա ակնկալելի էր, որ **h** նախաձայնը, որպես հայերենի այդ շրջանին բնորոշ երևույթ, առկա լիներ նաև պոլինեզիական լեզուներում: Ռապանուիներում մասնագետները փաստում են h-ի անկում (h/-). higa/iga, hiri/iri, hekaheka/ekaeka, hu/u: Ելնելով ռապանուիներեն-հայերեն բառային զուգահեռների համեմատությունից բխող մեր այն դիտարկումից, որ լեզվի խորագույն հնության կամ, այսպես կոչված, արմատաստեղծման փուլում բառերը միայն «աճել» են, կարծում ենք, որ այն անհրաժեշտ է դիտարկել որպես **h** նախաձայնի հավելման երևույթ (ø>h). iri>hiri, ekaeka>hekaheka, iga>higa, u>hu:

Վերոհիշյալ օրինակներին կարելի է հավելել նաև

ռապ. **ati/hati** «կտրել, կտրել» - հայերեն –**ատ** արմատ (ձեռնատ, պոչատ, ծերատ, հերատ, քարատ, գունատ, ակնատ «աչքը վնասված») և **հատ** «կտրելը, հատում, կտոր» (վիմահատ, նորահատ)⁶, արմատի երկրորդ ձևն է **յատ** «կտրել, մանաւանդ ծառի ճիւղերը կտրել» (յատանել, յատոց, յատուկ),

ռապ. **anau/hanau** «ծնել, ծննդաբերել» - հայ. **բրբ.** (Կոտայք) **անա** «մայր», *anna «սնող մայր»⁷ և բնիկ հայերեն **հան** «մեծ մայր», որից՝ **հանի** «մայր հորն կամ մօր»,

ռապ. **amu** «ուտել» և **hamu-hamu** «ուտել մնացորդները» - հայ. **մնկ.** **ամ** (անել) «ուտել» և **համ-համ** (անել) «ուտել», ինչպես նաև **համ** «որակութիւնն կամ զգածումն լեզուի և քմաց և կոկորդաց»,

ռապ. **ariu/hariu** «նայել ինչ-որ մեկին» - բնիկ հայերեն **յառել** (զաչս) «անշարժ դիտել», «սևեռել, անքթիթ նայել»,

ռապ. **aite/haite** (a-ite, ha-ite) «պատկերացնել», «պատկերել» - հայերեն **յայտնի** «ծանուցեալ, ծանոթ, ակներև, բացերև»,

ռապ. **iga/higa** «սայթաքել» - հայերեն **հոյծ** «ողորկ», նաև՝ **գայթ/տ**,

⁴ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 101:

⁵ ՀԱԲ, հ.1, էջ 76:

⁶ Այս արմատի h>s իրացումով է կազմված հայ. **բրբ.** (Ղրբ.) **սա'տոր** բառը, որով անվանում են այն կոճղը, որի վրա փայտ են ջարդում (կտրում):

⁷ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 84:

ռապ. **anui** «պակասորդ», **hanao** «հանել (ցանցից, կողովից)», **hanohano** (hano-hano) «սրտխառնոց» - հայերեն **հան-** «հանել բայի արմատը», **հանումն** «հանելն, ելք», (տես նաև հայ. աւատ/հաւատ, աւաքել/հաւաքել, աւանիկ/հաւանիկ, աւել/յավելու):

Այսպիսով, *ava>hava* «*խավար*» զարգացումը միանգամայն օրինաչափ երևույթ է թե՛ ռապանուերենի, թե՛ հայերենի համար: Ավելին՝ կարծում ենք, որ *hava* «*խավար*» բառի **հաւ** պարզ արմատով է կազմված հայերեն չստուգաբանվող հաւալ- «թաքուստ» բառը, որից էլ ունենք հաւալոց անստույգ բառը⁸:

Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում գործում է ռապ. **h** – հայ. **խ** համապատասխանություն.

ռապ. **horoi** «չորացնել» - բնիկ հայ. **խորով** «կրակի վրայ այրելը»,

ռապ. **harei** «տուն, խրճիթ» - բնիկ հայ. **խուղ** «խրճիթ, հիւղ, խեղճ տնակ»,

ռապ. **hatu** «հողի մեծաբեկոր» - բնիկ հայ. **խութ** «ծովի մեջ ցցված ժայռ», *բրբ.* (Ղրբ.) **խիւթ** «հարթ գետնի վրայ բարձրացած բլուր», բնիկ հայ. **խոչ** «ոտքին զարնվելու քար, փայտ, ցից, արգելք»,

ռապ. **hi2** «գլխացավ» - բնիկ հայ. **խիթ** «ցավ (փորի կամ ոտքի)», բնիկ հայ. **խօթ** «հիւանդ (մարմնով)»,

ռապ. **hu3** «բոց», «վառվել, վառել» - բնիկ հայ. **խար/խոր** «այրել, դաղել»,

ռապ. **hanau** (anau, anui) «կորուստ, վնաս» - բնիկ հայ. **խուն** «սակաւիկ, քիչ»,

ռապ. **hatuhatu** (hatu-hatu) «խեղաթյուրել» - բնիկ հայ. **խաթար** «ապականել, աւրել», **խաթարել** «ավերել, եղծանել»,

ռապ. **hitihiti** (hiti-hiti) «լույսը բացվել», «արթնանալ» - բնիկ հայերեն **խիլրտ** «խլրտում, շարժում, երերում», նաև **խտղտալ**, **խտիղ**⁹ (*բրբ.* խտուտ, խտոտ, խտիկ) «նյարդային գրգիռ աչքերում՝ լույսից», «խտղտանք, գրգիռ»,

ռապ. **hahari** «բարձրաձայն ծիծաղել» - բնիկ հայ. **խախանք** «բարձրաձայն ծիծաղ»,

ռապ. **heva** «խելագարություն», «խելագարվել» - հայ. **խել**¹⁰ «յիմար, խենթ» և այլն:

Ըստ այդմ՝ մարկիզերեն **hava** «խավար» բառի հայերեն համարժեքը **խաւար** «խավար, մութ» բառն է: Այն համարվում է փոխառություն իրանական աղբյուրից և համեմատվում մ. պ. xvarvarān, պագ. xvawar, պ. xāvar «արևմուտք», այլև «արևմուտքի խավարային գոտի, խավար» բառերի հետ: ¹¹ Հ. Աճառյանը ևս փոխառեալ է համարում պարսկերենից՝ միաժամանակ նշելով, որ Հյուբշմանը «...դժուար է գտնում այսպիսի հին և շատ գործածական մի բառ պարսկերենից դնել փոխառեալ...»:¹²

Ռապանուերեն **tihō** «մթություն», «մթին, մռայլ, խավարամած» բառի հայերեն զուգահեռներն են. բնիկ հայ. **թուխ** «թանձր գորշ, սև», իբրև առանձին բառ Հայկազյան բառարանը մեկնաբանում է որպես «մթին, խաւար, մութ, մռայլ»¹³: Գ. Ջահուկյանը գտնում է, որ այն թերևս ծագում է հնդեվրոպական *tu-kho-՝ *tēu-, *tu- «ուռչել» արմատից:¹⁴ Թուխ բառը հայերենի որոշ բարբառներում (Ազլ., Գոր., Ղրբ., Ոզմ) հնչում է **թօխ**, որի հետ նույնն է նաև ռապանուերեն **kohukohu** (kohu-kohu) «ամպ» բառը: Այն

⁸ ՀԱԲ, հ. 3, էջ 67:

⁹ Գ. Ջահուկյանը կասկածանքով դնում է ծագած հ.-ե. *k^uhedilo-, *k^ued- «խայթել, ծակել, մղել, սրել, խթանել, դրդել»-ից:

¹⁰ Գ. Ջահուկյանը հարցականով դնում է ծագած հ.-ե. *skebh- «կտրել, ճեղքել» արմատից:

¹¹ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 324:

¹² ՀԱԲ, հ. 2, էջ 351:

¹³ ՀԱԲ, հ. 2, էջ 203: Աճառյանը համարում է կասկածելի:

¹⁴ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 274:

ստացվում է հաշվի առնելով ռապանուերենին հատուկ է t/k հերթագայությունը, տես օրինակ՝ Tu/Ku, Tane/Kane, Tangaroa/Kanaloa ևն: Իմաստային տեսակետից այն բացարձակ նույնական է հայերեն *բբբ*. (Ղրբ.) **թուխալ**¹⁵, **թոխալ**, **թուղբ**, **թողբ** «ամպ, մշուշ, մառախուղ», «ամպամած» բառերին (հմմտ. նաև անհայտ ծագման **թոյր** «գույն, երանգ» բառը):¹⁶

Նախապոլինեզերենի համար վերականգնված է **‘aho** «մութ, մթություն» բառ, որի տառացի հայերեն զուգահեռը **սհ** «վախ, սարսափ» բառն է: Գ. Ջահուկյանն այն համարում է իրանական փոխառություն և համեմատում է մ. պ. āhr ('hl), մնք. պ. 'hr's'd «վախեցած, զարհուրած» բառերի հետ: Նկատի ունենալով պոլինեզիական լեզուներին վերագրվող տարիքը, հայերենի հետ տառացի համընկնումը և հայերեն բառի առավել կարճ լինելը, գտնում ենք, որ այն ևս բնիկ հայերեն բառ է:

Hava (heva, hiva) «*խավար*» արմատը պոլինեզիական լեզուներում ունի նաև «*սև*» իմաստ. նորզելանդական մաորիների լեզվում hiva նշանակում է «*սև*», հավայերենում ևս արտահայտում է «*սև*» իմաստ՝ որոշակի սահմանափակումով. մատնանշում է միայն զոհաբերվող կենդանու գույնը, մարկիզերեն Nuku **Hiva** = ռուսերեն **Черноостровье** (Սև կղզիներ): Ի. Կ. Ֆյոդորովան գտնում է, որ հին ռապանուերեն լեզվում նույնպես hiva բառը կարող էր նշանակել «*սև, խավար*», որովհետև առասպելներից մեկում ասվում է, որ արևը մայր է մտնում Հիվայում:¹⁷

Արևմտյան Պոլինեզիայում (Տոնգա և Սամոա կղզախմբեր), որտեղ տեղի ունի h/s հերթագայություն, այն հնչում է որպես **sava, siva**, ինչը թե՛ հնչյունական, թե՛ իմաստային պլաններով նույնանում է հայերեն **սև** (գրաբարյան **սեաւ**) բառին: Այն, ըստ Հ. Աճառյանի, փոխառություն է պարթև. *siyān ձևից, վերջինս էլ՝ հայրսկ. *siyāva = զնդ. syāva- «սև»-ից՝ «...պահված միայն յատուկ անունների մեջ»:¹⁸ Պոլինեզերեն **sava, siva** բառերը տառացիորեն նույնանում են այնպիսի զուգահեռների հետ, ինչպիսիք են հայ. **սև** (սեվ) (հմմտ. նաև *բբբ*. սեվ (սեռ. **սիվու**), սե՛վ, սրեվ, **սիվ** (վերջին ձևով հնչում է Զթ., Հմշ., Մկ., Մրդ., Սվեդ., Տիգ., Տի. բարբառներում)¹⁹, հայ. **sivu** «մութ մոխրագույն», սերբ. **siv** «գորշագույն», չեխ. **sivy**, սլով. **siv**, ռուս. **си́вый** «գորշ», օսու. **sau** «սև», սոգդ. **sav** «սև», պրուս. **sivan** «մուգ», վրաց. **շավի**, ինգիլ. **շավ** «սև», հայ. **շավ** (պահված միայն Շավարշ, Շավասպ հատուկ անունների մեջ) բառերը:

Ռապանուերեն **nehu** «մուգ», «պղտոր», «ամպամած» և nehunehu (**nehu-nehu** «մութ, խավար» բառերի հայերեն համարժեքներն են. բնիկ հայերեն **մուխ** «ծուխ» (բխեցվում է հնիս. smugh- «ծխել, ծուխ» արմատից)²⁰, **մութ/մութն** «մութ, խաւար, մթութին» (բխեցվում է բնիկ հնդեվրոպական *meut-՝ *meu- «խոնավ, կեղտոտ, կեղտոտել» արմատից),²¹ **մեգ** «մշուշ, մառախուղ», բխեցվում է հնիս. meigh- «մշուշ, անձրև» ձևից,²² անհայտ ծագման **մուգ** «մուգ, խիտ, թանձր (գույնի մասին)»:

Այսպիսով՝ դիտարկված պոլինեզերեն ութ բառերը (**po, ava/ao, hava, tiho, kohu, aho, sava/siva, nehu**) ունեն հայերեն տասնհինգ զուգահեռներ (բալ, ագանիլ, ալթ,

¹⁵ Ըստ Գ. Ջահուկյանի, «թուխ»-ի աճականով ձևն է:

¹⁶ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 271:

¹⁷ И. К. Фёдорова, Мифы и легенды острова Пасхи, Л., 1988, с. 6.

¹⁸ ՀԱԲ, հ. 4, էջ 195, Լ. Շ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 113:

¹⁹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 4, էջ 196:

²⁰ ՀԱԲ, հ. 3, էջ 353:

²¹ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 536:

²² ՀԱԲ, հ. 3, էջ 311:

խաւար, թուխ (թոխ), թուխպ (թոխպ), թոյր, ահ, սև/սեաւ, մուխ, մէգ, մոխիր (մոծիր/մոճիր²³), մութ/մութն, մուգ), որոնցից

բնիկ հայերեն են համարվում տասը (երկուսը՝ հարցականով), դրանք են՝ **բալ, ագանիլ, աւթ, թուխ, թուխպ (?), մուխ, մոխիր մոծիր/մոճիր (?), մէգ, մութ/մութն,**

փոխառյալ՝ երեք (**խաւար, ահ, սև/սեաւ**) և

անհայտ ծագման՝ երկու արմատներ (**թոյր, հաւալ-/հաւալոց**):

Հաշվի առնելով գիտական վերջին հետազոտությունների արդյունքում պոլինեզիական լեզուներին վերագրվող տարիքը (40-50.000 և ավելի տարի), որը մի քանի անգամ գերազանցում է հայերենին, առավել ևս միջին պարսկերենին այսօր վերագրվող տարիքը, պոլինեզերեն-հայերեն բառային զուգահեռների երկպլանային (ձևաիմաստային) լիակատար համընկնումը, բացահայտված ռապանուերեն-հայերեն ընդհանրությունների համակարգային բնույթը, առավել հավանական ենք համարում անհայտ ծագման **թոյր, հաւալ**- և փոխառյալ համարվող հայերեն **խաւար, սև/սեաւ** և **ահ** բառերի բնիկ հայկական ծագումը:

²³ Գ. Զահուկյանը ենթադրում է կապ մոխիր բառի հետ և բխեցնում է հ.-ե. *sme-, (*smei-) «քսել, ջնջել» արմատից, նշվ. աշխ., էջ 533: